

անելով բազմախուռն թարգմանական բառերի մէջ: Նորայրի բառարանը չը նայելով իր համեմատական համառօտութեան՝ սուսպարան, վատահելի, զիտնական աշխատութիւն է, նոր բառարանը աւելի դորձնական ուղղութիւն ունի, բայց ամեն քայլափոխում կասկածելի է:

Իբրև մերջաբան՝ մի նկատողութիւն ես, որ բառարանից դուրս է և ընդհանուր դարձած մի դրական տգեղ երեսյթի է վերաբերում: Շատ և շատ փաստեր կան նոր բառարանում, որոնք ապացուցանում են, թէ նրա հեղինակը մեծ չափով օդառուել է նորայրից:

Համեմատուել, օր. Appointer. «Նորայր՝ «Հրաման տալ զառաւորի (միայս յառաջ բերելոց)»: Լուսինեան՝ «Հրաման տալ զառաւորի (միայս յառաջ բերելոց)»: Etoile filante, tombante. «Նորայր՝ «Յափեալ, սլացեալ, սահեալ, թոփչ ասող, Ա. ասուաք». Լուսինեան՝ սլացեալ՝ սահեալ՝ թափեալ՝ թոփչ ասող, թոփչ, ասուաք». և շատ ուրիշները:

Յայտնի է միւս կողմից, որ մեզանում գրական մեծ երկասիրութիւնների ձեռնարկողները մի տեսակ նահատակներ են, որոնց ոչ միայն մտաւոր աշխատանքը նիւթապէս չէ վարձատրուում, այլ դեռ իրանցից էլ գրամական գոհարերութիւն է պահանջնուում: Այս գէպքում նրանց վարձատրութիւնը՝ միակ բարոյականը պէտք է լինի. պէտք է որ նրանցից օգտուող, իբրև աղբիւր գործածող ամեն մի հեղինակ՝ նուիրական սլարաք համարէր յիշել իր նահատակ նախորդին՝ իբրև օժանդակ, իբրև աղբիւր իր աշխատութեան: Այս սլարականութիւնն աւելի ևս ստիպողական է ներկայ գէպքում, երբ Նորայրը իր բառամթերքից նշանաւոր մասը քաղել է ինքնուրոյնաբար, ձեռագիրները քրքրելով, փոշու միջից լսյա աշխարհ հանելով, իսկ նոր բառարանի հեղինակը այդ պատրաստ նիւթը, առանց աշխատանքի, արտագրել է նրանից: Սակայն արդար լինելու համար աւելցնենք, որ Նորայրի հետ նոյնակէս վարուել են և ուրիշները, և որ գրական աղբիւրները չը յիշատակելու ախտը դժբախտաբար ընդհանուր, շատ տարածուած երեսյթ է մոր մէջ:

ԱՏ. ՄԱԼԻԱՍԱՆ

Յ) ՀԱՅԱՍՏԱՆԻ. Թագաւոր Լուսիկ և Սեսեւ Հավիկ. Վաղարշապատ,
1900 թ., գինը 25 կ.:

Հերեաթանման այդ վէպի մէջ պատկերանում է Դերսիմի*)
Վրանաբնակ և խաչնաբած ցեղերի հովուական կեանքը: Ժողո-

*) Թիւրքաց Հայաստանի արևմտեան մասում:

վրդական այդ ստեղծագործութեան համառօտ բովանդակու-
կութիւնը հետեւալն է.

Կամախում ապրում էին եօթը եղբայրներ. նրանց բար-
մաժիւ հօտերի և վրանների առաջ բաց էին Եփրատ գետի ձախ
եղերքի բոլոր արօտները մինչև Դերսիմ: Եղբայրներից աւագը
կամախի թագաւորի սիրած ոչմն էր և հարկանանը: Մի քանի
ժամանակից յետոյ մեռնում են բոլոր և եղբայրները անզաւակ
և մնում է կենդանի միայն Փոթ անունով եղբայրը, որին և անց-
նում են միւս եղբայրների բոլոր հօտերն ու կայքը: Այդ հարուստ
հոգիւը նոյնպէս անզաւակ է լինում: Միայն շատ ուշ Աստուած
տալիս է նրան մի աղջիկ, բայց դա էլ կոյր և անզամալոյն է
ծննում:

Հավուի այդ աղջկայ հետ միևնոյն օրը լոյս աշխարհն է
գալիս Բերդակի հզօր թագաւորի միակ որդի Լուսիկը, մի
գեղեցիկ, կայտառ և ուժեղ տղայ: Վէպի միաքն է ցոյց տալ, որ
ճակատազրի որոշումն անփոփոխ է և եթէ նա վճռել է որ գեղե-
ցիկ և ուժեղ թագաւորացնը պակուի մի հոգուի կոյր և
անզամալոյն արջկայ հետ—անզատճառ այդ պէտք է կատարուի,
և կատարում է:

Պատանի Լուսիկը մի օր որպի զնալիս պատահում է ուխ-
տատեղում մի խումբ աղջիկների: Նոյն զիշերը երազում նա
տեսնում է որ իր նշանածը պէտք է լինի մի ինչ որ հոգուի ան-
դամալոյն աղջիկը: Ճակատազրի այդ որոշումն անհաւատավի է
թւում Լուսիկին: Անցնում են օրեր և նա մոռանում է երազը:
Մի անգամ որսորդութեան ժամանակ անտառում նա հանդիպում
է հոգուական մի վրանի: Մտնում է այդ տեղ զիշերելու: Վրանի
տակ ապրում էին հոգիւը, նրա կինը և անզամալոյն աղջիկը:
Լուսիկը երազում իմանում է որ հէնց այդ վրանում է գտնում
ճակատազրից իրան որոշուած նշանածը: Զարթնելով և հոգուին
ու նրա կնկան լը տեսնելով վրանում, նա մօտենում է մի մն-
կիւնում ցնցատիների տակ պառկած աղջկան և զարհուրում է
տեսնելով նրա այլանդակութիւնը:

—Դանսակի մի հարուստով եկ աղատուեմ սրանից, մտա-
ծում է Լուսիկը և ցցում դանսակը աղջկայ փորն ու դուրս փախ-
չում վրանից:

Աղջկայ մայրը վերադառնալով վրանը, հանում է դանսակը
արիւնաշաղ աղջկայ մարմնից և կապում է նրա վէրքը: Ապա զա-
նազան հրաշքներով աջողութ բժշկել աղջկան բոլոր մարմնա-
ւոր արատներից և վերջը՝ հոգուի աղջիկը կերպարանափոխուե-
լով դառնում է մի հրաշքի գեղեցկունի, սատափի ստամներով,
որի համար և կոչում է Սետե (սատափ):

Գեղեցկուհի Սետեր սկսում է օդնել մօրն ու հօրը: Նա ցանկութիւն է յայտնում, որ հօր փոխարէն լնքը արածացնի ոչխարները: Շուտ սովորում է պքանչելի սրբնդ ածել և հոգւ ռութիւն անել:

Մի անգամ, Համբարձման օրը, երբ աղջկերքը Սետեի հետ միասին մի լեռան լանջին վիճակ էին գցում և գուշակութեան երգեր երգում, եկաւ զօսնելու և կուսիկը, որ արդէն ժառանգել էր հօր գահը: Լուսիկ թագաւորը տեսնելով Սետեի գեղեցկութիւնը, սաստիկ սիրահարուում է նրա վրայ. ի հարկէ նրա մաքով չէր կարող անցնել, որ իր առաջին հէնց այն աղջիկն է, որին նա սպանած էր կարծում: Լուսիկը վերադառնալով իր պալատը, երկար ժամանակ չէ կարողանում իր մաքից հանել Սետեի պատկերը, բայց միենոյն ժամանակ չէ ուզում որ շրջապատողները իմանան նրա սիրահարութեան մասին: Մի քանի ժամանակ տանջուելոց յետոյ նա վճռում է մեն-մենակ գնալ ու գտնել այդ գեղանի հովուհուն: Խոր, մութ և կուսական անտառներում նա մոլորուած է, հազար ու մի վտանգ և սարսափներ է տեսնուու և երբ անտառից լոյս աշխարհ է դուրս գալիս, նա ամեն մի պատահողից հարցնում է.

—Աչքերը մէրջան, ատամները սատափի, եկաւ անցաւ, տեսարք Այսպանը նա միայն գիտէր Սետեի մասին:

Հաս դուարութիւններով վերջապէս նա հասնում է մի լեռան և իմանում, որ նրա վրայ է գտնուում հովուհին իր հօտի հետ, բայց սարը ամեն կողմից արդէն պաշարուած է լինում Քէլ թագաւորի զօրքերով: Նա ուզում է փախցնել գեղեցկուհուն: Լուսիկը այնու ամենայնիւ կարողանում է պատահել Սետեին. բայց որովհետեւ սա հովուի չորերով է լինում՝ չի ճանաչում և յետ է դառնում տուն:

Յետոյ վրայ է հասնում ձմեռը: Ձիւնը ծածկում է սար ու ձոր: Սետեի ոչխարները կեր չունեն, խոտ չը կայ: Գիւղի առևտրական հրէան էլ խոստանում է խոտ տալ, եթէ Սետեր նրա որդու կինը դասնայ: Սետեր վերադառնում է կորցնել իր հօտը, քան գնալ մի հրէայի: Նա ջերմեռանդ աղօթքով դիմում է Աստուծու օգնութեան: Հասնում է զարունը, բացւում է երկինքը: Սարերը ծածկում են կանաչով ու ծաղիկներով: Հօտը դուրս է զալիս արածելու, բայց անչափ ուտելով նորածիլ խոտը, սկսում է սատկոտել և եօթ հազար ոչխարից մնում է մի հազար:

Քէլ թագաւորն էլ ձեռք չի վերցնում գեղեցկուհուց լեռնէ լեռ է գցում Սետեին: Ի՞նչաէս ազատուելք Հովուհին գիւմում է խորամանկութեան: Իր «փատուտիկ» ոչխարի բուրգը

կտրում է և շնուռմ միրուք ու բեկեր և դրանով խարում Քէլի ձիաւորներին: Բայց վերջ ի վերջոյ նրա խորամանկութիւնը բացւում է և կտրիմ հովուհին ստիպուած է լինում գէնքի զիմել իր պատիւը պաշտպանելու համար: Այդ ինքնապաշտպանութեան համար նրան օգնում են իր երկու հաւատարիմ չները, «որոնք հայր Սբրահամի չների ցեղից էին», և ձևնասոն առիւծն ու ինձը: Լուսիկն իմանում է իր սիրածի վանդաւոր զրութեան մասին և օգնութեան է հասնում: Կոռի ժամանակ ինքը Սետեն իր ձևորվ սպանում է իր ախոյիան Քէլին: Այդպէս ահա կատարւում է ճակատազրի վճրով և լուսիկը սպակւում է Սետենի հետ:

Ահա կարծ բովանդակութիւնը այս, երեխ, աղաւաղած զիւցազներգութեան, որ «փոքր ինչ կոկուած» և գրական լեզուի վերածած զրի է սանցկացրել պ. Հայկունին: Նա «երկար երգերը» (եր. 48) տեղ-տեղ դուրս է ձգել: Մենք կարծում ենք, որ աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէր պ. Հայկունին թէ մեր զրականութեան և թէ ազգագրութեան, եթէ «Մինաս Բաբրի» պատմածը նոյնութեամբ զրի առնէր և միայն ծանօթութիւնների միջացավ զիւրացնէր այդ ժողովրդական վէպի ընթերցանութիւնը: Դուցէ հէնց «փոքր ինչ կոկելու» չնորդիւ է, որ պատմուածքի կմազը տեղ-տեղ ընդհատուում է: Սակայն լոյս տեսած ձևորվ էլ ժողովրդական այս վէպը արժանի է մեծ ուշադրութեան. մեր բանաստեղծները կարող են համեմատել իրանց դժգոյն մուսան մեր ժողովրդի առողջ ստեղծագործութեան հետ:

I. Ս.

**4) ԱՐԵԱՄ ԶԱՐԾԳ. Ռանասեղծութիւններ. Վենետիկ. 1900 թ.
զինը 1 ռ.**

Սաստուածային կրակ ունեցող անդրագէտ մարդն էլ կարող է իր հոգու յուզմունքները բանաստեղծորէն արտայայտել: Դըրան ապացոյց մեր աշլուներից շատերը, որոնք դժբախտաբար թուրքերէն են երգել:

Ժողովրդական շատ գեղեցիկ երգեր հէնց այդպիսի անհամաների ստեղծագործութիւններ են: Այդպիսի հեղինակները մնուացւում են, բայց նրանց հոգին իրանց յօրինած երգերում գեռ ապրում է, որովհետև ժողովուրդը նրանց մէջ արձագանք է գտնում իր վշտին և ուրախութեան, իր ձգտումներին ու յոյսերին: Բանաստեղծը կարող է մինչև անդամ՝ միայն երգել իր անհատական զդացմունքները, իր հոգու արամադրութիւնները: